մաններով. մինչ հայք ցրուեալ են ընդարձակ երկրի մը վրայ, զանազան օտար ցեղերու մէջ։ Բայց հայք արժանի են վարչական լաւագոյն դրութեան մը, որ ստուգիւ պիտի հաստատուի վերջապէս։" (Թայմզ կը վերջացնէ ակնարկելով Լորտ Տիւֆերինի դիւանագիտական ճարտարութեան և համոզկոլու կարողութեան, որք մեծապէս պիտի նպաստեն եղեր բաղձացեալ նպատակին իրականացման)։

(Մասիս)

Կ. ՊՕԼՍԻ ԱԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎ

Ազգային ժողովն այսօր ի Նիստ գումարեցաւ Ղալաթիոյ եկեղեցին ընդ Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և առնապետութեամբ Յ. Մէրիէմ—Պուլի էֆէնտիի։

Ժամ 4-ին ատեանը բացուեցաւ ի ներկայութեան 48 երեսփոխանաց։ Նախորդ նիստերու ատենագրութեանց վաւերացումն յետաձգեցաւ ժամանակն ուշ լինելուն պատճառաւ։

Փափազեան Ստեփան էֆէնտի հարցապնդում մ'ըրաւ Պատրիարքարանէն եկած վիճակագրութիւններու վրայ, որոց մէջ Հայաբնակ գաւառաց բնակչաց թուոյն վրայ հակասութիւնք կը տեսնուին, և առաջարկեց որ Ս. Պատրիարք Հայրն Համարատուութիւն ընէ Հայկական խնդրոյն նկատմամբ։

Սոյն հարցապնդման և առաջարկութեան ի պատասխան Ս. Պատրիարքը ծանր անկարգութիւններ ըրաւ Փափազեան էֆէնտիի դէմ, նա ալ վշտանալով՝ առաւ քալեց։ Ս. Պատրիարքն յայտարարեց Ժողովին թէ Փափազեան էֆէնտիի ըրած հարցապնդումն և առաջարկութիւնն ամբաստանութիւն են իրեն դէմ, և թէ ժողովին պարտքն էր իւր հրաժարականն ընդունիլ, և այլն, և այլն, և մեկնեցաւ Ժողովէն։

Ասոր վրայ յուզմունք եղաւ ժողովին մէջ և երեսփոխանք մէկ ժամու չափ միմեանց հետ վիճելէ յետոյ, Ատենապետ էֆէնտին օրակարգին անցնիլ ուզեց, բայց ժամանակն անցած և երեսփոխանաց մեծ մասն հետզհետէ մեկնելու վրայ լինելով, ատեանը փակեցաւ ժամ 5 $^{3}/_{4}$-ին։

(Մասիս)

ՄԻ ՅԱՒՈՎ ՊԱԿԱՍ

„Մասիս" լրագրում կարդում ենք հետևեալը։

„Գոհութեամբ կը ծանուցանենք թէ կաթողիկոսական յանձնախումբն երէկ Ամեն. Տ. Մկրտիչ Կաթողիկոսին առնն երթալով, իւր պատրաստած ծրագրին վրայ բանակցեցաւ Ն. Բարձ. Սրբազնութեան հետ։

„Այս բանակցութիւն շորս ժամ տևեց, որոյ միջոցին երկուսանք եղած առարկութիւնք լիովին բացատրուելով՝ վերջապէս համաձայնութիւն գոյացաւ և Ս. Կաթողիկոսն ընդունեց յանձնախմբին պատրաստած ծրագիրն։

„Յետ այնորիկ Յանձնախումբը Ս. Կաթողիկոսին մայրաքաղաքէս մեկնելու կրոյցը մէջ բերելով՝ զգացուց Ն. Սրբազնութեան թէ մինչև խնդրոյն պաշտօնապէս աւարտումն՝ իւր ի մայրաքաղաքս ներկայութիւնը կարևոր էր։ Ն. Սրբազնութիւնն այս կէտի վրայ ալ համաձայնելով՝ յանձնախումբին անդամներն ի ճաշ հրաւիրեց, որոյ միջոցին փոխադարձ բաժակներ առաջարկուեցան Ս. Կաթողիկոսին և յանձնախմբին անդամից կողմէ։ Յետոյ Ս. Կաթողիկոսը բաժակ առաջարկեց վասն կենաց Տ. Գէորգայ Վեհ. Կաթողիկոսի ամենայն Հայոց և Տ. Ներսէս Ս. Պատրիարքի Հայոց Թուրքիոյ։

„Այսպէս յաջողութեամբ վերջացաւ յանձնախմբին բանակցութիւնը Ս. Տ. Մկրտիչ Կաթողիկոսին հետ։"

Սորանից պարզ երևում է, որ Կիլիկիայի կաթողիկոսը միշտ պատրաստ է եղել խաղաղ կերպով գործը վերջացնել, եթէ միայն ազգային ժողովը ուշադրութիւն դարձներ իր ասելիքների վրա։ Յուսով ենք, որ այս օրինակը խրատ կը լինի ազգային ժողովին ոչինչ լուրջ ազգային հարց զանցառութեան մէջ չը թողնելու համար։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 17 հոկտեմբերի

Անցեալ նամակով փոքր ինչ հասկացողութիւն տուեցի Ներսէս պատրիարքի ունեցած համոզմունքի վրա հայկական հարցի լուծման նըկատմամբ, բայց նորա հետ ունեցած այդ տեսակցութեան ժամանակ, ինչպէս ասեցի նախընթաց նամակում, շատ ուրիշ հարցեր ևս շօշափվեցան։ Այդ տեսակցութեան ժամանակ, պատրիարքը յայտնեց ինձ քմծիծաղ կերպով, թէ Ստեփան Փափազեան անուն վատ արարածը ինձ վրա գանգատ է տուել ազգային ժողովի դատաստանական վարչութեան «Մշակի» մէջ իրան խայտառակելուս համար։ — «Ուրեմն Նիկողոսեանը մասամբ հասաւ իր նպատակին, սրբազան», ասեց պ. Յարութիւն Քէչէէկեանը, որը ընկերակցեց ինձ պատրիարքի մօտ։—«Ի՞նչպէս» հարցրեց Ներսէսը։—«Այնպէս, որ ձեր դէմ այսչափ վատութիւններ անող անարեւ արարածին այնտեղ հասցրեց, որ նորա մէջ անգամ ամօթխածութեան և պատուաճանաչութեան նշոյլ երևաց...» Ներսէսը ոչինչ չասեց, միայն փոքր ինչ խնդալու պէս ցոյց տուաւ իրան. յետոյ, քիչ պաուզ անելով, պատրիարքը ասեց. «որչափ էլ իմ անձիս դէմ վատ վարվող մարդիկ են եղել, ես նոցանից ոչ մէկին ինձ թշնամի չեմ նկատել, որովհետև ամենքին միշտ բարիքով եմ միայն պատասխանել. իսկ նոքա որոնք իմ դէմ յարձակվելով որչափ իրենց վնաս են բերած հայկական հարցին, գաւառագրութիւններ կամ մատնութիւններ անելով, այդպիսիների դատաստանը ես խնդրած եմ միայն այն նախախնամութիւնից, որը եղել է սոսկ հայոց անտէր ազգի օգնականը....» Այս խօսքերը արտասանելիս պատրիարքը փոխեց իր պօզայի հանգստութիւնը և զօրավիգ դիրք առնելով, աջ ձեռքով ուժգին ժեստ արեց։

Ուրեմն սորանից կարողացանք նկատել, որ Ստեփան Փափազեանը այն վատ մողեսներից էր, որի անունը միայն տալիս վրդովվում էր մի այնպիսի ներողամիտ և վեհանոգի մարդու ըզգացմունքը, ինչպէս Ներսէսն է։ Հաղիւ կարողացայ մոռացութեան տալ այդ գարշելի և գեղնաքարշ էակին, որ այսօր նորից կարդացի Մասիսի մէջ և լսեցի ազգային ժողովի մէջ ներկայ գտնված մի արժանահաւատ մարդուց. այն սկանդալի մասին, որ արել է Ստեփան Փափազեանը, յարձակվելով պատրիարքի վրա իրան ներկայութեան ժամանակ, որից յետ երկայնամիտ Ներսէսը անգամ էլ կորցնելով համբերութիւնը, ստիպված է գտնվել «կծու ակնարկութիւններ» անել իր վատազգն և ցեխոտ հակառակորդի դէմ։ Կարելի է արդեօք, որ Ներսէսը չը հիանդանայ և չը հեռանայ Եւրոպա, երբ մի կողմից նորան ոչ մի կոպէկ անգամ օգնութիւն անող չը կայ, իսկ միւս կողմից էլ Փափազեանի նման բաղդախնդիրները միշտ թշնամութիւններ են անում և վիրաւորանք հասցնում պատրիարքի սրտին նորա համար միայն, որ այդպիսի բաղդախնդիրների համար պատրիարքը չէ կարողանում գտնել եղալի և փաղալի պաշտօններ։

Երևակայեցէք այս մարդու ինչ լինելը. մի քանի տարի առաջ նա շինում է այստեղի ուսումնարանի համար հայոց պատմութեան մի դասագիրք (էլ հասկացէք թէ այստեղի ուսումնարանների բանը որտեղ է հասել). դասագրքի մէջ նա գնում է ևս այն անցքը, ինչպէս Սարգիս եպիսկոպոս Զալալեանը թուլնաւորեց Ներսէս կաթողիկոսին։ Որովհետև Ստեփան Փափազեանի լրբութիւնից վախենում է բոլոր ազգային ժողովը, իսկ նորա հետ միասին և կրթական վարչութիւնը, վասնորոյ Փափազեանի դասագրքի առաջին տպագրութիւնը ձեռաց ցրվում է ուսումնարանների մէջ։ Հերթը հասնում է երկրորդ տպագրութեան. ինչ էք կարծում, երկրորդ տպագրութիւնից էլ անհետանում է Սարգիս Զալալեանի անունը, իսկ Փափազեանը այնչափ նամուս է գտնում աշխարհիս մէջ, որ ամեն տեղ պարծենալով է ասում Սարգիս Զալալեանից իր ստացած երկու հարիւր ոսկի կաշառքի մասին։ Դեհ ինչ անէ այսպիսի մէկի հետ խեղճ Ներսէս պատրիարքը. նա էլ կաշառ տայ. էս էնից շատ էլ ուզեց տայ, նորա անկուշտ աչքը և պիղծ սիրտը չահելու համար, բայց ո՞ր տեղից գտնէ փող նորա համար, երբ օտար խըմբագիրներին անգամ բացի սուրճ ոչինչ չունէ տալու։

Այս տեսակ սրիկաներից են և Միացեալ ընկերութեան նախորդ տնօրէն ժողովի անդամները. մինչև հիմայ ևս 40,000 ռուբլու հաշիւը չը ներկայացնելով այժմեան տնօրէն ժողովին, նորա արգելք են լինում ընկերութեան ընթացիկ գործերին և տեղեկագրի, հաշի ու նոր պրոգրամի յայտարարութեան։ Այս նոր տեղեկագիրը, որ կը սկսվի տպագրվել, անմիջապէս նախորդ տնօրէն ժողովի հաշիւները տալուց յետո, շատ լաւ տպաւորութիւն պիտի գործէ այստեղի և այդտեղի հայ հասարակութեան վրա, ինչպէս մի մեծ գոկումենտ, որի մէջ գտնէ կարելի է տեսնել թէ ինչ է արել մինչև հիմայ Միացեալ ընկերութիւնը և ինչպէս պիտի գործէ այսուհետև։ Մի քանի դիտողութիւններ արեցի այդ տպագրվելի տեղեկագրի մասին պ. Մ. Զեբազին, որը կատարեալ հաւանութիւն տալով, խոստացաւ իրագործել։

Նախորդ տնօրէն ժողովը, որի ներկայացուցիչներն են յայտնի անձինք, այն ազգասէրները, որոնց գովված ազգասիրութիւնը միայն այնչափ եղաւ, որ Հայաստանի որբերի վրա մի քանի հազար ոսկի նստեց, չունենալով էլ ուրիշ յենակէտ, սկսել են պարապվիլ հիմայ մի «վարժապետական հարցով»։ Այստեղի լրագիրների մէջ էլ այնչափ յանդգնութիւն ունեն, որ յայտնում են թէ այդ հարցը նոքա պաշտպանում են Մշակի «պրինցիպի անունով»։ Մէկը հարցնէ սոցա թէ՝ ով իրանց իրաւունք տուաւ խօսել Մշակի պրինցիպի կողմից... Ահա այսպէս են սոքա. այնչափ լիրբ են, որ ոչինչ միջոցների առաջ յետ կանգնել չը գիտեն. մի կողմից «Սօսիան» և «Փենիչ» ստորագրութեամբ գրում են այդտեղ «Մշակի» դէմ, իսկ միւս կողմից էլ, երբ այստեղի հասարակութեան մէջ իրանց վարկը ցեխի մէջ է ընկած, ուզում են Մշակը իրանց վահան բանել. կեցցէ եզու